

ARMENIAN
HOLY APOSTOLIC CHURCH

MONTREAL
5242 Park Ave.

PARISH COUNCIL



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ

ՄՈՆՏՐԵԱԼ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մոնթրեալ, 19 փետրուար 1968

Գերշ. Տ. Թորգոմ Եպիս. Մանուկեան,
Առաջնորդ Ամերիկայի Հայոց,

ՆԻՒ ԵՈՐՔ

Սրբազան Հայր,

Ներկայ գրութեամբս հաճոյքն ունիմ Ձերդ Սրբազնութեան խոնարհաբար
հաղորդելու ծխական տարեկան ընտրութեան արդիւնքը, որ տեղի ունեցաւ 18
փետրուարին, Կիրակի, 1968, ՀԱՅ ՏՈՒՆԻ մէջ, ներկաներու թիւն ըլլալով 103:

Պաշտօնէ դադրած 6 անդամներու տեղ գոց քուէարկութեամբ ընտրուեցան
տիարք,

Ալթունեան	Վահէ	100 քուէ ✓
Գասապեան	Եղուարդ	89 քուէ ✓
Կուտսուզեան	Արամ	97 քուէ ✓
Կուտսուզեան	Միսաք	73 քուէ
ԿէՕչէրեան	Համբարձում	79 քուէ
Թորիկեան	Հրաչ	68 քուէ
Միշմանեան	Երուանդ	100 քուէ ✓
Սուքիասեան	Նուպար	80 քուէ ✓

Կը փթութամ Ձերդ Սրբազնութեան ուշադրութեան յանձնել, թէ անցեալ
Ծխական Խորհուրդի անդամներէն Պրնք. Սահակ Թօփալեան եւ Միսաք Կուտսուզեան
ընտրուած էին պաշտօնավարելու համար մինչեւ Տարեկան Ընդհանուր Անդամական
Ժողով, իսկ չորս անձեր պաշտօնէ դադրած ըլլալուն եւ նախապատրասկան Ծխական
Ժողովիս Ծխական Խորհուրդիս անդամներուն թիւը 9ի բարձրացնելու որոշման
հետեւանքով, Անդամական Տարեկան Ընդհանուր Ժողովս ընտրեց վերոյիշեալ ութ
անձերը, ուստի ներկայ Ծխական Խորհուրդիս կազմն է ,

Ալթունեան	Վահէ
Գասապեան	Եղուարդ
Թորիկեան	Հրաչ
Կուտսուզեան	Արամ
Կուտսուզեան	Միսաք
ԿէՕչէրեան	Համբարձում
Մարտիկեան	Ալպէր

ARMENIAN
HOLY APOSTOLIC CHURCH

MONTREAL
5242 Park Ave.
PARISH COUNCIL



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ

ՄՈՆՏՐԻԱԼ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- 2 -

Շիշմանեան
Սուքիասեան

Երուանդ
Նուպար

Ըստ թեմիս կանոնադրութեան 27րդ յօդուածին, վերոյիշեալ ներու
վաւերացումը կը յանձնեմ Ձերդ Սրբազնութեան եւ թեմական Խորհուրդիս
վաւերացման :

Հաճեցէք ներկայեալ գտնել,

- 1- Նախապատրաստական Ծխական Ժողովիս ատենագրութիւնը,
- 2- Ծխական Ժողովիս ներկայացուած տարեկան հաշուեկշիռը,
- 3- Տպագրեալ հարցարանը Եկեղեցւոյ կազմակերպութեանց գործու
նէութեան մասին,
- 4- Հովիւին տուած տեղեկատուութիւնը Ծխական Ժողովին,
- 5- Եկեղեցւոյ կազմակերպութեանց եւ Ծխական Խորհուրդի տարեկան
բարոյական տեղեկատուութիւնը տրուած Ծխական Ժողովին:

Մատչելով ի համբոյր Ձերդ Սրբազնութեան Ս. Աջոյն եւ որդիակական
յարգանքով,

Վազգէն Վարդապետ Թադոյեան

[Handwritten signature]
Հովիւ